ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

**N 1128-Ա/2** **18.07.2023 թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, ԱՐՎԵՍՏԻ, ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետի 4-րդ և 19-րդ կետի 20-րդ ենթակետերով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ**

1. Հաստատել երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների 2023-2024 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն հավելվածի:
2. Հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանին:

X

**ՆԱԽԱՐԱՐ՝** **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

**Հայաստանի Հանրապետության**

**կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի**
**2023 թվականի -ի**
**N -Ա հրամանի**

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, ԱՐՎԵՍՏԻ, ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

## 1. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցներում (այսուհետ՝ Դպրոց) ուսումնական տարին մեկնարկում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար նախատեսված ժամկետներին համապատասխան: Նույնը վերաբերում է նաև աշնանային, ձմեռային և գարնանային արձակուրդներին:
2. Ուսումնական տարվա տևողությունը 34-40 շաբաթ է, ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների:
3. Ելնելով մասնագիտական առանձնահատկություններից և շենքային պայմաններից՝ կարող է սահմանվել վեցօրյա ուսումնական շաբաթ:
4. Առարկաների և դասաժամերի քանակը ուսումնական պլանում կարող է ընդլայնվել՝ ելնելով դպրոցի ֆինանսական հնարավորություններից:
5. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ձևերն են անհատական և խմբային պարապմունքները:
6. Անհատական դասի տևողությունը՝ 45, խմբայինը՝ 40 րոպե է:
7. Դպրոցի սովորողների (այսուհետ՝ սովորող) գիտելիքների գնահատումը կատարվում է ուսումնական պլանով նախատեսված առարկաների մասով յուրաքանչյուր կիսամյակի վերջում կազմակերպվող տարբերակված ստուգարքներով, ինչպես նաև քննություններով, որի ժամանակացույցը ներկայացված է համապատասխան աղյուսակներում:
8. Տարբերակված ստուգարքների, քննությունների անցկացման համար Դպրոցի տնօրենի հրամանով ձևավորվում են մասնագիտական հանձնաժողովներ:
9. Քննությունը գնահատվում է գնահատման 10 միավորային համակարգով, գնահատականը համարվում է բավարար՝ 3, 4, 5, լավ՝ 6, 7, 8 և գերազանց՝ 9, 10 միավորների դեպքում:
10. Փոխադրական քննությունը և տարբերակված ստուգարքը անբավարար ստանալու դեպքում, տվյալ առարկայի համար կազմակերպվում է վերաքննություն՝ նոր ուսումնական տարվա մեկնարկից առաջ՝ օգոստոսի 15-25-

ն ընկած ժամանակահատվածում: Սույն դրույթը չի վերաբերում «Համույթ», «Երգչախումբ», «Նվագախումբ», «Մարմնամարզություն» առարկաներին, որոնց ստուգարքը գնահատվում է «ստուգված»՝ նշված առարկաների հաճախումների առնվազն 75 տոկոսի դեպքում:

**11.** Վերաքննության, ինչպես նաև ավարտական քննությունների քննական հանձնաժողովի կազմը համաձայնեցվում է Դպրոցի կառավարումն իրականացնող լիազոր մարմնի (այսուհետ՝ Լիազոր մարմին) հետ:

**12.** Փոխադրական քննությունը կամ ստուգարքը անբավարար ստանալու դեպքում, կամ ուսումնական տարվա ընթացքում ընդհանուր 60 և ավելի, կամ մեկ առարկայից ընդհանուր 16 և ավելի դասաժամ անհարգելի բացակայություն ունեցող սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

**13.** Դպրոցի և սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) փոխադարձ համաձայնությամբ՝ սովորողի անհատական պարապմունքների անընդմեջ մինչև 16 դասաժամ հարգելի բացակայության դասաժամերը կարող են համալրվել՝ Դպրոցի կողմից առաջարկված ժամանակացույցի համաձայն:

**14.** Դրսեկության ձևով (էքստեռն) դասարանից հաջորդ դասարան վաղաժամկետ փոխադրումը կազմակերպվում է ուսումնական պլանով նախատեսված ստուգարքների և քննությունների հանձնման, սովորողի գերազանց առաջադիմության, Դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ և Լիազոր մարմնի թույլտվության դեպքում:

**15.** Ուսումնառության ամբողջ ժամանակահատվածում սովորողը դասարանից հաջորդ դասարան վաղաժամկետ կարող է փոխադրվել միայն մեկ անգամ:

**16.** Դրսեկության ձևով (էքստեռն) Դպրոցում ընդունելության կազմակերպման գործընթացն իրականացվում է մինչև նոր ուսումնական տարվա մեկնարկը՝ Դպրոցի երկրորդ կամ երրորդ դասարաններում, Լիազոր մարմնի համաձայնությամբ, տվյալ դասարան փոխադրվելու համար նախատեսված ստուգարքներն ու քննությունները հանձնելու դեպքում:

**17.** Դպրոցից Դպրոց սովորողի տեղափոխությունը կարող է իրականացվել ուսումնական տարվա ընթացքում:

**18.** Սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա սովորողին կարող է տրամադրվել երկարաժամկետ (ակադեմիական) արձակուրդ՝ մեկ տարի ժամկետով:

**19.** Դպրոցի ավարտական վկայական ստանում են այն շրջանավարտները, որոնք հանձնել են ավարտական ստուգարքներն ու քննությունները, հաճախել են ուսումնական պլանով նախատեսված բոլոր դասաժամերի առնվազն 70%-ը: Սույն դրույթը չի վերաբերում 16-րդ կետի համաձայն դպրոց ընդունված շրջանավարտներին:

**20.** Դպրոցում վճարովի հիմունքներով կարող է կազմակերպվել նախադպրոցական, հետդպրոցական, ինչպես նաև ընդհանուր գեղագիտական զարգացման գծով ուսումնառություն:

**21.** Տեսական առարկաների (սոլֆեջո, երաժշտական գրականություն, արվեստի պատմություն, երաժշտական գրագիտություն և ունկնդրում) խմբային պարապմունքների մեկ խմբում ընդգրկված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում, փոքր համակազմ ունեցող Դպրոցում այն կարող է բաղկացած լինել՝ սկսած 3 սովորողից:

**22.** Լիազոր մարմնի որոշմամբ՝ Դպրոցում ուսուցումը կարող է կազմակերպվել հեռավար եղանակով:

**23.** Օրինակելի ուսումնական պլանի աղյուսակներում ներկայացված են տվյալ մասնագիտության ուսուցման առարկաների ցանկը և նվազագույն դասաժամերը, որոնք պարտադիր են ավարտական ստուգարքներին և քննություններին մասնակցության համար, եթե «Լրացուցիչ պարզաբանումներ» բաժնում այլ բան նախատեսված չէ:

**24.** Օրինակելի ուսումնական պլանի «Լրացուցիչ պարզաբանումներ» մասում ներկայացված է տվյալ բաժնում ուսուցման կազմակերպման գործընթացի մանրամասն նկարագիրը:

**Աղյուսակ 1**

## ԴԱՇՆԱՄՈՒՐ

**(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)**

| **Առարկայի անվանումը** | Ուսումնառության տարի | | | | | | | քննություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շաբաթական դասաժամերի քանակը | | | | | | | |
| | I | II | III | IV | V | VI | VII | |
| Հիմնական առարկա | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | IV, VII |
| Սոլֆեջո | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 2 | IV, VII |
| Երաժշտական գրականություն | | | | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | VII |
| Երգչախումբ | 1 | 1 | 1 | 1 | 2 | 2 | 2 | |
| Ընտրովի | | 1 | 1 | 1 | 1 | 1 | 0.5 | |
| **Ընդամենը շաբաթական** | **4.5** | **5.5** | **5.5** | **7** | **8** | **8** | **8** | |

**Աղյուսակ 2**

## ԼԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

**(Ջութակ, թավջութակ)**

**(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)**

| **Առարկայի անվանումը** | Ուսումնառության տարի | | | | | | | քննություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շաբաթական դասաժամերի քանակը | | | | | | | |
| | I | II | III | IV | V | VI | VII | |
| Հիմնական առարկա | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | IV, VII |
| Սոլֆեջո | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 2 | IV, VII |
| Երաժշտական գրականություն | | | | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | VII |
| Երգչախումբ կամ նվագախումբ կամ համույթ | 1 | 1 | 1 | 1 | 2 | 2 | 2 | |
| Ընտրովի | | 1 | 1 | 1 | 1 | 1 | 0.5 | |
| **Ընդամենը շաբաթական** | **4.5** | **5.5** | **5.5** | **7** | **8** | **8** | **8** | |

**Աղյուսակ 3**

## ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

**(դասական, ժողովրդական, էստրադային)**

**(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)**

| **Առարկայի անվանումը** | Ուսումնառության տարի | | | | | | | քննություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շաբաթական դասաժամերի քանակը | | | | | | | |
| | I | II | III | IV | V | VI | VII | |
| Հիմնական առարկա | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 2 | 2 | IV, VII |
| Սոլֆեջո | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 2 | IV, VII |
| Երաժշտական գրականություն | | | | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | VII |
| երգչախումբ | | 1 | 1 | 1 | 2 | 2 | 2 | |
| Ընտրովի | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 0.5 | |
| **Ընդամենը շաբաթական** | **4** | **5** | **5** | **6.5** | **7.5** | **8** | **8** | |

**Աղյուսակ 4**

## ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

**(դասական, ժողովրդական, էստրադային)**

**(9-12 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)**

| **Առարկայի անվանումը** | Ուսումնառության տարի | | | | | քննություն |
|---|---|---|---|---|---|---|
| | Շաբաթական դասաժամերի քանակը | | | | | |
| | I | II | III | IV | V | |
| Հիմնական առարկա | 1.5 | 1.5 | 1.5 | 2 | 2 | III, V |
| Սոլֆեջո | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 2 | III, V |
| Երաժշտական գրականություն | | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | V |
| երգչախումբ | | 1 | 2 | 2 | 2 | |
| Ընտրովի | 1 | 1 | 1 | 1 | 0.5 | |
| **Ընդամենը շաբաթական** | **4** | **6.5** | **7.5** | **8** | **8** | |

**Աղյուսակ 5**

## ՓՈՂԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ, ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԱԿՈՐԴԵՈՆ, ՏԱՎԻՂ, ԿԻԹԱՌ

**(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)**

| **Առարկայի անվանումը** | Ուսումնառության տարի | | | | | | | քննություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շաբաթական դասաժամերի քանակը | | | | | | | |
| | I | II | III | IV | V | VI | VII | |
| Հիմնական առարկա | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | IV, VII |
| Սոլֆեջո | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 2 | IV, VII |
| Երաժշտական գրականություն | | | | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | VII |
| Երգչախումբ կամ նվագախումբ կամ համույթ | 1 | 1 | 1 | 1 | 2 | 2 | 2 | |
| Ընտրովի | | 1 | 1 | 1 | 1 | 1 | 0.5 | |
| **Ընդամենը շաբաթական** | **4.5** | **5.5** | **5.5** | **7** | **8** | **8** | **8** | |

## ՓՈՂԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ, ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԱԼՏ, ԿՈՆՏՐԱԲԱՍ, ՏՈՒԲԱ, ԱԿՈՐԴԵՈՆ, ՏԱՎԻՂ, ԿԻԹԱՌ

**(9-12 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)**

| **Առարկայի անվանումը** | Ուսումնառության տարի | | | | | քննություն |
|---|---|---|---|---|---|---|
| | Շաբաթական դասաժամերի քանակը | | | | | |
| | I | II | III | IV | V | |
| Հիմնական առարկա | 2 | 2 | 2 | 2 | 2 | III, V |
| Սոլֆեջո | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 2 | III, V |
| Երաժշտական գրականություն | | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | V |
| Երգչախումբ կամ նվագախումբ կամ համույթ | 1 | 1 | 2 | 2 | 2 | |
| Ընտրովի | | 1 | 1 | 1 | 0.5 | |
| **Ընդամենը շաբաթական** | **4.5** | **6.5** | **7.5** | **8** | **8** | |

## 2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Երաժշտարվեստի բաժիններում ընդունելությունը կազմակերպվում է 6-9 տարեկան երեխաների համար՝ 7-ամյա կրթության դեպքում, իսկ 5-ամյա կրթության դեպքում՝ 9-12 տարեկան երեխաների համար:
2. «Հիմնական առարկա» և «Ընտրովի» առարկաների ուսուցումը կազմակերպվում է անհատական, իսկ «Սոլֆեջո», «Երաժշտական գրականություն» և «Համույթ կամ նվագախումբ կամ երգչախումբ» առարկաների ուսուցումը՝ խմբային պարապմունքների եղանակով, բացառությամբ «Ազգային նվագարաններ» բաժնի «Դհոլ» երաժշտական գործիքի «Հիմնական առարկա» դասաժամերի, որի 50%-ը հատկացվում է անհատական, 50%-ը՝ 3-6 սովորողից բաղկացած խմբային պարապմունքների համար:
3. «Երգեցողություն» բաժնի «Հիմնական առարկա» դասաժամի տևողությունը սահմանվում է 40 րոպե:
4. «Համույթ» առարկայի ուսուցումը կազմակերպվում է 3-12, «Նվագախումբ»-ը՝ 12-25, իսկ «Երգչախումբ»-ը՝ 20-35 սովորողներից բաղկացած խմբային պարապմունքներով: Ելնելով «Համույթ» և «Նվագախումբ» առարկաների պարապմունքների առանձնահատկություններից՝ «Համույթ» առարկայի համար

12 և «Նվագախումբ» առարկայի համար 17 սովորողներից բաղկացած խմբի պարապմունքների համար սահմանել մեկ միավոր համույթի և նվագախմբի ղեկավարների համար (նշված թվաքանակից ցածր կամ բարձր կազմերի դեպքում՝ համամասնորեն նվազեցնելով կամ ավելացնելով հատկացվող միավորը): Նույն հիմքով և սկզբունքով՝ 27 սովորողից բաղկացած երգչախմբի ղեկավարի և կոնցերտմայստերի համար սահմանել համապատասխանաբար 1 և 0.5-1 միավոր:

5. «Համույթ», «Նվագախումբ» կամ «Երգչախումբ» առարկայի բաշխումն ըստ սովորողների իրականացվում է Դպրոցի կողմից: «Համույթ» և «Նվագախումբ» առարկաների պարապմունքները 7-ամյա կրթության պարագայում իրականացվում են 3-րդ, իսկ 5-ամյա կրթության դեպքում՝ 2-րդ դասարանից:
6. «Ընտրովի» առարկայի դասաժամերը հատկացվում են հետևյալ առարկաների պարապմունքների համար՝ այլ երաժշտական գործիք, երգեցողություն, ընդհանուր դաշնամուր, թերթից ընթերցում, կոմպոզիցիա, ինչպես նաև նվագակցություն և գործիքային դուետ (բարձր դասարանների սովորողների համար):
7. Ելնելով դպրոցի շենքային պայմաններից, ինչպես նաև՝ դպրոցի նյութատեխնիկական համապատասխան հագեցվածության պարագայում՝ «Ընտրովի» առարկայի 0.5 դասաժամը կարող է հատկացվել «Ընդհանուր դաշնամուր» առարկայի պարապմունքների համար: «Երգեցողություն» բաժնի համար նախատեսված «Ընտրովի» առարկայի դասաժամերը հատկացվում են «Ընդհանուր դաշնամուր» առարկային:
8. «Հիմնական առարկա» (բացի դաշնամուր, տավիղ, ակորդեոն, դհոլ, կիթառ երաժշտական գործիքներից) դասաժամի անցկացման համար հատկացվում են դաշնամուրային նվագակցության ժամեր՝ ուսումնական տարվա համար՝ 20-40 ժամի չափով: «Դաշնամուր» բաժնում նվագակցության դասաժամերը (կոնցերտային նվագակցություն/ իլյուստրացիա) տրամադրվում են 4-7-րդ դասարանների սովորողների համար՝ ուսումնական տարվա համար՝ 20 ժամի չափով:
9. Լրացուցիչ վարձավճարով երաժշտարվեստի բաժնի սովորողները կարող են ստանալ հավելյալ ուսումնառություն՝ այլ հիմնական առարկայի (երկրորդ գործիք/ երգեցողություն) գծով:
10. «Ալտ», «Կոնտրաբաս», «Տուբա» երաժշտական գործիքների ուսուցումը նպատակահարմար է կազմակերպել բարձր դասարանների սովորողների համար, կամ 5-ամյա կրթության դեպքում՝ 12-13 տարեկան երեխաների ընդունելության կազմակերպման միջոցով:

**Աղյուսակ 7**

## ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

### (6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

| **Առարկայի անվանումը** | Ուսումնառության տարի | | | | | | | քննություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շաբաթական դասաժամերի քանակը | | | | | | | |
| | I | II | III | IV | V | VI | VII | |
| Կերպարվեստի հիմունքներ և նկարչություն | 2 | 2 | 2 | | | | | |
| Կիրառական արվեստի հիմունքներ | 2 | 2 | 2 | | | | | |
| Ծեփագործություն | 2 | 2 | 2 | | | | | |
| Գծանկար | | | | 3 | 3 | 4 | 4 | VII |
| Գունանկար | | | | 3 | 3 | 3 | 3 | VII |
| Կոմպոզիցիա (ստեղծագործական թեմատիկ նկարչություն) հաստոցային/կիրառական | | | | 2/1 | 2/1 | 2/1 | 2/1 | VII |
| Քանդակ կամ կիրառական արվեստ | | | | 2 | 2 | 1 | 1 | VII |
| Արվեստի պատմություն | | | | 1 | 1 | 1 | 1 | |
| **Ընդամենը շաբաթական** | **6** | **6** | **6** | **12** | **12** | **12** | **12** | |

**Աղյուսակ 8**

## ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

**(10-12 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)**

| **Առարկայի անվանումը** | Ուսումնառության տարի | | | | քննություն |
|---|---|---|---|---|---|
| | Շաբաթական դասաժամերի քանակը | | | | |
| | I | II | III | IV | |
| Գծանկար | 3 | 3 | 4 | 4 | IV |
| Գունանկար | 3 | 3 | 3 | 3 | IV |
| Կոմպոզիցիա (ստեղծագործական թեմատիկ նկարչություն) հաստոցային/կիրառական | 2/1 | 2/1 | 2/1 | 2/1 | IV |
| Քանդակ կամ կիրառական արվեստ | 2 | 2 | 1 | 1 | IV |
| Արվեստի պատմություն | 1 | 1 | 1 | 1 | |
| **Ընդամենը շաբաթական** | **12** | **12** | **12** | **12** | |

## 3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Կերպարվեստի բաժնում ընդունելությունը կազմակերպվում է 6-9 տարեկան երեխաների համար՝ 7-ամյա կրթության դեպքում, իսկ 4-ամյա կրթության դեպքում՝ 10-12 տարեկան երեխաների համար:

2. Դպրոցի հայեցողությամբ «Կոմպոզիցիա» առարկայի ավարտական քննությունը կարող է կազմակերպվել հաստոցային կամ կիրառական ձևերից մեկով:

3. Խմբային պարապմունքների մեկ խմբում ընդգրկված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում, փոքր համակազմ ունեցող Դպրոցում այն կարող է բաղկացած լինել՝ սկսած 3 սովորողից:

4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի, անհրաժեշտ է նախատեսել՝

1) դասաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար՝ շաբաթական 0.25 դասաժամի հաշվարկով.

2) պլեներային աշխատանքի դասաժամեր՝ յուրաքանչյուր խմբի համար շաբաթական մինչև 1,5 դասաժամի հաշվարկով:

5. Ելնելով Դպրոցի շենքային պայմաններից, ֆինանսական և նյութատեխնիկական հագեցվածության հնարավորություններից՝ բարձր դասարաններում յուրաքանչյուր խմբի համար կարող է պլանավորվել շաբաթական 0.5-1 ժամ «Ընտրովի» առարկա: «Ընտրովի» առարկաներն են՝ հեռանկարչություն, անատոմիա, գրաֆիկա, համակարգչային գրաֆիկա:

**Աղյուսակ 9**

## ՊԱՐԱՐՎԵՍՏ

**(6-8 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)**

| **Առարկայի անվանումը** | Ուսումնառության տարի | | | | | | | քննություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շաբաթական դասաժամերի քանակը | | | | | | | |
| | I | II | III | IV | V | VI | VII | |
| Դասական պար | | | 4.5 | 4.5 | 4.5 | 4.5 | 4.5 | VII |
| Հայկական պար | | | 2 | 2 | 2 | 2 | 2 | VII |
| Ժամանակակից պար | | | | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | VII |
| Պատմակենցաղային պար | | | 2 | | | | | |
| Ժողովուրդներին բնորոշ բեմական պար | | | | | 1.5 | 1.5 | 1.5 | VII |
| Ռիթմիկա և պար | 4 | 4 | | | | | | |
| Մարմնամարզություն | 1.5 | 2 | 1 | 1 | 1 | 1 | 1 | |
| Երաժշտական գրագիտություն | | | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | |
| Արվեստի պատմություն | | | | 1 | 1 | 1 | 1 | |
| **Ընդամենը շաբաթական** | **5.5** | **6** | **10** | **10.5** | **12** | **12** | **12** | |

**Աղյուսակ 10**

## ՊԱՐԱՐՎԵՍՏ

**(9-12 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)**

| **Առարկայի անվանումը** | Ուսումնառության տարի | | | | | քննություն |
|---|---|---|---|---|---|---|
| | Շաբաթական դասաժամերի քանակը | | | | | |
| | I | II | III | IV | V | |
| Դասական պար | 4.5 | 4.5 | 4.5 | 4.5 | 4.5 | V |
| Հայկական պար | 2 | 2 | 2 | 2 | 2 | V |
| Ժամանակակից պար | | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | V |
| Պատմակենցաղային պար | 2 | | | | | |
| Ժողովուրդներին բնորոշ բեմական պար | | | 1.5 | 1.5 | 1.5 | V |
| Մարմնամարզություն | 1 | 1 | 1 | 1 | 1 | |
| Երաժշտական գրագիտություն | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | |
| Արվեստի պատմություն | | 1 | 1 | 1 | 1 | |
| **Ընդամենը շաբաթական** | **10** | **10.5** | **12** | **12** | **12** | |

## 4. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Պարարվեստի բաժնում ընդունելությունը կազմակերպվում է 6-8 տարեկան երեխաների համար՝ 7-ամյա կրթության դեպքում, իսկ 5-ամյա կրթության դեպքում՝ 9-12 տարեկան երեխաների համար:

2. Բոլոր առարկաները ուսուցանվում են խմբային պարապմունքների եղանակով:

3. «Դասական պար», «Հայկական պար», «ժամանակակից պար», «Պատմակենցաղային պար», «ժողովուրդներին բնորոշ բեմական պար» առարկաների պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 8-12, իսկ «Ռիթմիկա և պար», «Մարմնամարզություն» /պարտեր/ առարկաների խմբերում՝ 10-16: Առանձին դեպքերում առարկաների ուսուցումը կարող է իրականացվել առանձնացված՝ տղաների և աղջիկների խմբերով (տղաների խմբում թվաքանակը թույլատրելի է՝ սկսած 4-ից):

4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի, անհրաժեշտ է նախատեսել՝

1) դասաժամեր նախաելույթային փորձերի և միջոցառումների նախապատրաստման համար՝ շաբաթական 1 դասաժամի հաշվարկով.

2) դասաժամեր «Բեմական փորձառություն» առարկայի պարապմունքների համար՝ շաբաթական 2 դասաժամի հաշվարկով.

3) նվագակցության ժամեր՝ «Բեմական փորձառություն» և Աղյուսակ 9-ի 1-7-րդ և 10-ի 1-6-րդ կետերի առարկաների պարապմունքների համար՝ նշված դասաժամերին համապատասխան.

5. Ելնելով Դպրոցի շենքային պայմաններից, նյութատեխնիկական հագեցվածության և ֆինանսական հնարավորություններից՝ բարձր դասարաններում յուրաքանչյուր սովորողի կամ խմբի համար կարող է պլանավորվել շաբաթական 0.5-1 ժամ «Ընտրովի» առարկա: «Ընտրովի» առարկաներն են՝ երաժշտական գործիք, մեներգեցողություն (անհատական), ստեպ, դերասանի վարպետություն (խմբային):

**Աղյուսակ 11**

## ԹԱՏԵՐԱՐՎԵՍՏ

**(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)**

| **Առարկայի անվանումը** | Ուսումնառության տարի | | | | | | | քննություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շաբաթական դասաժամերի քանակը | | | | | | | |
| | I | II | III | IV | V | VI | VII | |
| Դերասանի վարպետություն | 2 | 2 | 2 | 2 | 2 | 3 | 3 | IV, VII |
| Բեմական խոսք | 1 | 1 | 1 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | IV, VII |
| Բեմական շարժում | | | | 1 | 1 | 1 | 1 | |
| Արվեստի պատմություն | | | | 1 | 1 | 1 | 1 | |
| Պար | | | 1 | 1 | 1 | 1 | 1 | |
| Ռիթմիկա | 1 | 1 | | | | | | |
| Երաժշտական գրագիտություն | | | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | |
| **Ընդամենը շաբաթական** | **4** | **4** | **4.5** | **7** | **7** | **8** | **8** | |

**Աղյուսակ 12**

## ԹԱՏԵՐԱՐՎԵՍՏ

**(9-12 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)**

| **Առարկայի անվանումը** | Ուսումնառության տարի | | | | | քննություն |
|---|---|---|---|---|---|---|
| | Շաբաթական դասաժամերի քանակը | | | | | |
| | I | II | III | IV | V | |
| Դերասանի վարպետություն | 2 | 2 | 2 | 3 | 3 | V |
| Բեմական խոսք | 1 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | V |
| Բեմական շարժում | | 1 | 1 | 1 | 1 | |
| Արվեստի պատմություն | | 1 | 1 | 1 | 1 | |
| Պար | | 1 | 1 | 1 | 1 | |
| Ռիթմիկա | 1 | | | | | |
| Երաժշտական գրագիտություն | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | |
| **Ընդամենը շաբաթական** | **4.5** | **7** | **7** | **8** | **8** | |

## 5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Թատերարվեստի բաժնում ընդունելությունը կազմակերպվում է 6-9 տարեկան երեխաների համար՝ 7-ամյա կրթության դեպքում, իսկ 5-ամյա կրթության դեպքում՝ 9-12 տարեկան երեխաների համար:

2. Բոլոր առարկաները ուսուցանվում են խմբային պարապմունքների եղանակով:

3. Խմբային պարապմունքների խմբերի սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12 սովորող, «Բեմական խոսք» առարկայի համար՝ մինչև 5 սովորող:

4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի, անհրաժեշտ է նախատեսել ՝

1) դասաժամեր նախաելույթային փորձերի և միջոցառումների նախապատրաստման համար՝ շաբաթական 1 դասաժամի հաշվարկով.

2) դասաժամեր «Բեմական փորձառություն» առարկայի պարապմունքների համար՝ շաբաթական 2 դասաժամի հաշվարկով.

3) Նվագակցողին հատկացվող ժամեր՝ շաբաթական առնվազն 0.25 ժամի չափով՝ «Ընտրովի» առարկայի համար (բացի դաշնամուր, ակորդեոն, դհոլ, կիթառ գործիքների):

5. Ելնելով Դպրոցի շենքային պայմաններից, նյութատեխնիկական հագեցվածության և ֆինանսական հնարավորություններից՝ յուրաքանչյուր սովորողի կամ խմբի համար կարող է պլանավորվել շաբաթական 0.5-1 ժամ «Ընտրովի» առարկա: «Ընտրովի» առարկաներն են՝ երաժշտական գործիք, մեներգեցողություն (անհատական), գեղարվեստական խոսք, տիկնիկային թատրոն, (խմբային) և այլն: